45. ՃՈՒԿՈ ԵՎ ՃԵՅՐԱՆ

Կըլլի թաքավոր մի. իրեք հատ տղա կունենա. կըսը մենծ տղին. - Տղա՛ս, ես էալ* ծեր եմ, տասնըհինգ տարի սայմանիս գլոխը չայիրը չիմ գըցեր:

- Արքա՛ հայրիկ, - կըսը տղան, - միշտ սայմանիդ գլխու չայիրը շատ մեթ կինիս:

- էան սայմանի չայիրին օղն է օր էոմյուրս երկընցավ. էաս տասնըհինգ տարի օր չիմ գըցեր, էոմյուրս փճացավ, գնա՛, օ տեսնըս՝ չայիրին գլոխը աղբիր մի կա. չայիրին տկուն տե աղբիրը սահաթ մի կը քաշե, աղբիրն էալ լեռան տակ է. աղբրեն տե լեռան գլոխը տասվերկու սահաթ կը քաշե:

Էլավ մենծ տղան հարիր հատ ծիով առըց. գըցին, հասան չայիրը, տեսան օ մե արաբ մի նստեր է աղբրին վրա: Մի սև անպ էլավ, էրկինքը գոռաց, արգևն ու կարկուտը առըց:

Թաքավորին տղան ըսըց. - Քշեցե՛ք, ընինք աղբիրը:

Չայիրը կես ըրին-չըրին՝ ջրին ու մլին մեջ մնացին, չկրցին օ հասնեին:

Արաբը թուրը քաշեց, ընկավ էաս հարիր հատի մեջ, հարիր հատին էալ գլոխը կըրեց, ձիանն էալ մորթեց, եղմիշ ըրըց չայիրին օրթըլըխը, էջավ սըրթն ի վեար, գնըց:

Մի ամիս թաքավորին խապար չգնըց:

---

* էալ՝ ալ և էլ բառերուն միջին ձևն է, հետևաբար կարդալու է երկու ձայնավորները մի հնչմամբ (ծ.բ.):

Թաքավորը կանչեց օրթանճա տղին. - Այ տղա՛, աղբեարդ ճամփեցի սայմանի գլոխը, եա՛ բըռնվան, յա՛ ծեծ կինին, յա՛ քեֆի տեղ է, իրանց քեֆը կը հային. գնա՛ խապար մի առ՛, էկո՛:

Օրթանճա տղան էրկու հարիր հոգի խզմեթքյար ուներ, առավ, ընկավ առջևնին, գնաց, հասավ չայիրը, տեսավ մի սև մարդ աղբրին վրա կէրևա:

Արաբը սև ծինը հեծավ, թուրը քաշեց, չայիրը չմտածտան հասավ ընդոնց վրա, էրկու հարիր մարդն էալ տողրամ-տողրամ ըրըց, լցեց ըն լյաշերուն վրա, թողեց, գընըց:

Իրեք ամիս խապար չգընըց:

Թաքավորը կանչեց պզտի տղին. - Աղբրտանքդ գընցին, չէկան, գնա՛, խապար ա՛ռ, էկո՛:

Էլավ ըս տղան հրեղեն ծին հեծավ:

Պապը ըսըց. - Մինակ մ'էրթըր:

- Չէ, - ըսըց, - ես մինակ կէրթըմ:

Գնըց, հասավ չայիրը, տեսավ աղբրին վրա մի սև ծին, սև արաբ մի, օր մի պռունկը գետինն է, մին էրկինքն է:

Տղին շատ հեյպեթ երևաց:

Տեսավ օ մեկ սև անպ մի էլավ, էրկինքը ծենոտավ, հովով արգև մի առավ, դումանը էջավ, էալ էան աղբիր չտեսնըր:

Տղան պաշլայեց ծինը զենկու տալը, օ սահաթ մի չէղած՝ աղբիրը հասնի:

Չայիրը հալա կես չըրեր էր, արաբը ծինը հեծավ, հասավ տղին, չայիրին մեջ առին իրար. տղան տասվերկու թուր նետեց արբուն չկրցավ կըյրեր, չայիրին մեջ կը պտըտցնե. մի թուր զարկեց ծիու սարղիին, թրին ճոթը գետինը հասավ. արբուն ծին ընկավ, արաբը ընկավ գետինը, տղան էջավ օ արբուն գլոխը կըյրե, արաբը տղին ծինը հեծավ, լեառն ի վեր տնկվավ, շտկվավ էլավ, պատեցավ*:

Տղան վեց օր, վեց գիշեր հոտ մնըց, գնըց, տեսավ օ, օհօ՛, աղբրտոցը լեաշերը իրարու վրա բերդ է շիներ: Ձին էալ մոռցավ, տուն էալ մոռցավ կուլար, կաղաղակեր:

Առավոտը տեսավ օ արևը ցաթեր է աղբրին վրա, փառըլ-փառըլ փառլամիշ կըլլի. մի հատ աղջիկ կա հոտ, օր աշխարքի էրեսը չգտնիր:

Գնըց-մոտեցավ, «տեսնըմ ի՞նչ է», ըսըց:

---

* Լեառան մյուս երեսն ի վայր դարձավ, անհայտացավ (ծ.բ.):

Մոտեցավ. աղջիկ չէ, էղավ մեկ ճեյրան մի, պաշլայեց էաս թոփալ ճեյրանին էտևը վազիլը: Վազեց, կոխեց չայիրին մեջ. պաշլայեց պտըտցնիլը, օ սաղ բռնե կեոյե թե. չկրցավ, խոնջըցավ, քաշեց թուրը:

- Ձինիմ, պանիմ, - ըսըց:

Տեսավ, օ էղավ մեկ թոփալ կեյիկ մի, տընկվավ յոխուշն ի վեր:

«Հա՛ հուսա բռնիմ, հա հունա բռնիմ», - ըսըց, մինչև լեառան գլոխը էլավ, մթնեց, կեյիկը աչիցը կորավ:

«Ետ դառնամ, էրթըմ», - ըսըց:

Էլլալուն էլավ, էջնալուն չկըրնըր էջնըր, սարփ տեղեր ըռաստ էկավ, ճամփան կորուս, օտքը նետեր, կտոր-կտոր կըլլար: Հոնի նստավ:

«Ձպող մի լեցնիմ, տեսնըմ Աստված ինչ կը հաջողե»:

Տումանը էջավ, արզևը առավ, տղան թրջավ, թրջած թազի դարձավ:

Հայավ, ճրագ մի կէրնա, ճրագին շավը ի զինք կառնե:

Հովը դադարավ, տումանը էլավ վրուն, արզևն էլավ:

«Ճրագին չավլեն ինձիս առավ», - ըսըց:

Պաշլայեց մսիլը. կինե թը էլլա, թմրվեր է. մեշելիք է, փետ մը գտավ, թոփալ-թոփալ առավ ճրագին լոսը գնըց, հասավ մե քեմեր-խափու մի, օր քեմերնուն քարերը պիթուն օսկի էին:

Տղան կայնավ քեմեր-խափուին մեջ, մտածեց. «Ըսի իմ պապուս սարայը ըդանկ չէ, ըպա ըսոր տերը ինդո՞ւր է, ես ինդո՞ւր տ'էրթամ ներս»: Սահաթ մի կայնավ, տյուշուրմիշ էղավ:

«Վախը փարա չիներ», - ըսըց, մտավ ներս:

Տեսավ կնիկ մի, օր նստեր ճայր կը մաներ. ծծերը նետեր էր էտին ուսին վրան, օր իջեր էր գետին: Տղան ինք իր մտոցը անցոց. «Ըսի դևի կնիկ է, ինձիս պիտի ուտե»:

Պաշլայեց էտևուն ծծերը ծծիլը:

Կնիկը խոշլանմիշ էղավ, օլրվավ էտին, հայավ՝ օ մեկ աղկեկ տղա մի, կպեր է էտին, ծծերը կծծե:

- Մախպո՛ւթ, ծծերս չծծեիր, թելին հետ քիզի ճաղին վրա սարմիշ կինեի: Մախպո՛ւթ, ուսկա՞ զուզաս, ո՞ւր կէրթըս:

- Հեչ մ'ըսեր, մի՛ հարցներ, անա՛:

Էան լմանը գլխուն գալածը նախլ ըրըց:

- Որդի՛, էկո քիզի պեյիմ. եոթը հատ տղա ունիմ, եոթ տարի է գըցած է, ըսօր պտի գան, քիզի էալ կուտին, ինձիս էալ՝ մեղք իս:

Դևի կնիկը մի չպոխ ուներ առավ, զարկեց մերմեր քարին, ըսըց. - Մերմե՛ր քար, բացվի՛ր:

Քարը բացվավ, տղան կոխեց էադ տեղ, առջին գոցեց: Հեմել հայավ օ տղաքը թեք-թեք էկան, մտան ներս, պիրիքմիշ էղան մեկտեղ:

- Անա՛, մենք ճամփու իք էկեր, միզի ղայվե մի:

Էփեցին, խմեցին, նստան լախրտու ընիլը:

Մենծ տղան ըսըց. - Մնա՛, դուն մարդ կը սիրես, իսանի հոտ կուգա:

Եոթն էալ մեկ հեղ ըսին. - Մեր աղբեարը շիտակ կըսե, շիտակ կըսե՛ս, ըսե՛, չէ նե քիզի կը մորթինք:

- Կաթիս վրա էրթում էրեք, օ բան չեք ըներ, շիտակ կըսիմ:

Տղաքը մորը կաթերնուն վրա էրթում էրին:

Մեարերնին չպոխը զարկեց մերմեր քարին, հանեց դուս:

Տեսան, օ՜, ի՜նչ շահզադե տղա է, աշխրքին էրեսը չգտնվիր:

Պաշլայեցին հարցնիլը. - Մախպո՛ւթ, դու ես մեր մենծ աղբեարը, դու ինդո՞ւր էկար, ճնճուղը թևովը, օձը պորտովը չէր կրնար գար հոս, դու ինդո՞ւր էկար:

- Իմ գլխու գալածը նախլ ենելու չգար:

Էան լմանը նախլ ըրըց էղածը, ըսըց. - Ձիուս էտև կէրթամ:

- Էրկու օր կը կենաս, մեք նո՛ր իք էկեր, քեզ տավաթ կինինք. դու կենաս տունը, մեք կէրթաք ավ ու ղուշը, կուտինք, կը խմինք, քիզի կը դնինք ճանփու:

Կերան, խմեցին, իրանք գըցին ավը, մորերնուն թենպեյ ըրին. - Մեր մենծ աղբեարը ինդո՛ւր գիտես, ճանփու կը դնես:

Առավոտը կեր-կերակուր ըրին:

Դևի կնիկը ձեռացը տեյնեկը տվեց, ըսըց. - Կը տանիս օրթանճա քրոջս,էան քիզի ճանփու կը դնե. տեյնեկը տանելուն քիմի անվախ կըլլիս, էան քիզի բան չըսեր:

Կես գիշերուն անցած՝ խորոզը կանչելու կըլլի, ճանփու վրան ջուր չկար, դդում մի ջուր լեցոց. առավոտը տնկվավ լեառն ի վեր, եասույին անտա էլավ լեառան գլոխը: Տունն էալ հոնի էր, գնըց օ քորը նստեր, ճայր կը մաներ: Տեյնեկը նետեց առջին:

Հայավ, օ քրոջը տեյնեկն է, տղուն լաթ ձգեց, իքրամ ըրըց. - Բարի ես էկեր, հազար բարի, - ըսըց, - քորս ինդո՞ւր է:

- Լավ է:

Տեյնեկին վրա կը հայի օ, գրեր էր քրոջը. «Ըսի տղա իմ ըրեր»:

Հաց կերոց, ջուր խմցոց:

- Տղա՛ս, ինձի ութ հատ տղա կա, գարշելիստանը չըլլի՛ր, օ քիզի բան մի ըսին: էլի՛ քիզի պեյիմ:

էան լմանը տղան պեյեց:

Ութն էալ էկան, չեն նստիր, կայնուկ տեղ կըսին. - Շիտակ կըսիս, հոս մարդու հոտ, խամ մարդու հոտ գուգա:

- Ձեր վախուն լեառտանը կը դողան, վե՞վ գուգա հոսի. նստեցեք, ծիգի մերդե շերպեթ մի ընիմ, խմեցեք, օ իմ գլխուն գալածը նախլ ընիմ:

Խմեցին. մեարերնին տեյնեկը բերըց, նետըց առջևնին:

Ութն էալ ըսին. - Ըսի բերողը տի գննաս:

- Էլավ, թողըց, գընըց:

- Քիզի տողրամ-տողրամ կինիք, տի հանի՛ս, թագավորի պզտիկ տղան - Մախպուքը գա, ճանփու դնիս, չըլլի՛ր, տի հանիս:

Էան լման ըսըց տղոցը. հանեց, կերան, խմեցին, առավոտը լոսցավ. էան լմանը ճանփու դըրըց:

Ըդոնք էալ մենծ աղբեար էրին, հաշտվան*, իրարու հետ:

Էնոնք էալ. - Մեարերնիս գիտե, - ըսին:

Առավոտը էլավ, հացն ու ջուրը տվեց, իրան, թզպեն էալ տվեց, էան լմանը թզպին վրան գրմուն՝ ճանփու դրըց:

Գնըց լեառնի վեր էլավ, տեսավ մենծ ղոնախ մի, օր աշխրքին մեջ չգտնվիր. տեսավ ղոճա սարայն էալ ալափ-ալափ կը վառի. մտավ ներս. օ հավուզին մե խոռ ֆըրդոլայի կարմիր, մի սրան ճերմակ, մի սրան դեղին, կապոյտ, մչմչգուն, մեղրիկ վարդ է. մի սրա էալ նռան ծառ, սրա-սրա չորս բոլորը պատած են:

Օսկիե չիֆթե շամադանը մեկը աղբրին ընդին, մեկը ընդին:

Գնըց ներս, մտավ օ ղոճա քիրյազ չպողը լեցուցեր, հոխանոց լյուլե մ'էալ անցոցեր է վրան, նստեր կը խմե:

Տեյնեկն ու թզպեն նետեց առջին:

Քորը առավ, պագնեց, դրըց գլխուն:

- Օձը պորտովը, ճնճուղը թևովը ըս տեղանը մարդ չկրնըր գար, ինդո՞ւր էղավ քու ճանփան ընկավ ըսղին:

- Էկա, խսմեթ էր:

Գլխուն գալածը էան լմանը նախլ ըրըց:

Էաղ էալ տասվերկու տղա ուներ, էկան:

Գալողը էկավ. - Մախպո՛ւթ, բարի ես էկեր, Մախպութ, բարի ես էկեր...:

Քեյֆ, ուրախութեն ըրին:

---

* Բարև առին, տվին (ծ.բ.):

Մեարերնին ըսըց. - Մախպուքին կըսիք թե՝ «բարի ես էկեր», հեչ չիք ըսիր, թե գլուխդ ի՞նչ պատահեր, անցեր է:

Իմացան տղին գլխուն էկածը:

Դևին տղաքը ըսին. - Մեք տասվերկու տղա իք, մե մ'էալ դուն՝ տասվիրեք աղբեար թող ըլլիք: Տասվերկու տարի է օ, էադ արբուն հողուն մեջ ավ ու ղուշ կինիք, մեր աչվանը չկըյրեր, օ օլրտիք էդոր սայմանը, գողտուկ կօլրտիք:

Էնոր սարային նե՛ դուռ կա, նե՛ էրդիկ, մի փենճերե կա, յոթը խաթ, պիթուն մերմեր քարե շինած է: Չիք գիտեր, ինդո՞ւր կը մնա ներս, ինդո՞ւր կէլլա, մեկ էալ կը հայիք, օ չափուճախ փենճերեն ճնճղու պես կմնա:

Մեարերնին ըսըց. - Գնա՛, ետ դարձիր, Մախպո՛ւթ, շատ նեղուքին կը քաշիս:

- Անկարելի բան է, պտի էրթամ, օր էրթամ:

Խապար ճանփեցին պզտի, օրթանճա քրոջը, էկան նստան մեկտեղ, օ իրանք իրանց խելք խելաց տան:

- Տեսնըք ի՞նդուր տի ըլլի, - ըսին, - էաս տղան մեք տղա իք ըրեր, մեռնիլը աչիցը առեր, տ'էրթա:

Մենծ քորվըտանքը ըսըց. - էաս տղան հեմի կը մեռնի, հեմի նեղուքան մեջ կը նմա. էկըր կօգնիք նը՝ տղան ճանփիք, չէ նե՝ ետ ճանփիք:

Ձեռվանը կրծքնին զարկին, ըսին. - Ամեն բանի տեր իք մեք, թող էրթա:

Բերին էրկըթե լուծ մի տնկեցին, գետինը փորեցին, զարկեցին, էրկըթե սամիմ՝ էալ անցոցին գլուխը:

- Տեսե՛ք, էաս լուծը նշանակ է, էկըր ինք իրան կորզվավ գետինը՝ տղան մեռած է. էկըր սամին կոյրված է՝ տղան նեղուքան մեջն է, ժմնեցեք, հանեք:

Հերքեշ իրան տեղ գըցին:

Տղան էալ էլավ տասվերկու աղբոր հետ, մենծ չայ մի կար, անցոցին, տղաքը էան արբու ղոնախը ցունց տվին:

Հայան օ մարդ չէրևար. արաբը տեղ է գըցեր:

Արաբը իրեք ամիս քուն չըլլիր, գալած ժամանակը քսանը չորս սահաթ խոռուն քունի մեջ կը մնա:

Դևին տղաքը ըսին. - Գալդ լավ, դու էադ տեղ էլլալդ հայիր:

- Տասը ղաթ էալ ըլլի, ես կէլլըմ, ինչ օլտուղին ինձիս հասկըցուցեք:

- Օր էկավ, էլավ վերը, մի սահաթ կը կենաս, վեարը, էնի լաթերով կը պարկի. իրան թուրը քակիս, կառնիս, լաթերն էալ կը հանիս. մաննի մը

ունի, էնանկ իլմով հանես օ, շատ սխմուն է. էնանկ իլմով հանես, օ չիմանա:

- Օ մաննին չէլավ, մատը կը կըյրիմ:

- Չէղա՛վ, մատը կըյրես, չես խալըսիր:

Տղան պեյվավ:

Տեսավ օ արաբնը էկավ, ծիու վրայեն իջավ, ծինը ըրըց ախոռը, դուռը դրեց, քսանը չորս սահաթ էր, ծինը անոթի էր, հեծած վաղթը կարծվեր:

Ձինը սաստիկ քորքըզնաց, էանքան օ ներսեն քորքըզաց, էրկինք, գետին դողաց:

Տղին համար էր քորքըզաց, ծիան այտին էր:

Արաբը օլրվավ ետ, ծիուն չորս ճուռը կապեց, փալուդի մոլ մի կըյրեց, ընկավ ծիուն վրաք, էանքան զարկե՛ց, օր ուռեցավ ծինը, զարկած տեղը կը բարսընար կաշին:

Ըսըց արաբը. - Ըս հերսին քու տերդ ափըս անցներ:

«Քառսուն օր է բերեր իմ, ծեն չես իտար, էանանկ պոռացիր, օր սիրտս վախցավ, տունս վրաս, զիար ըսի, փլավ»:

Դուռը դրեց արաբը, էլավ վերևը:

Դռան դնիլը, էլլալը, փենճերեն ներս մտնելը մեկ էղավ. տղան իմաց չէղավ, հեմ էլ հայավ փենճերեն ներս կը մննա:

Տղան ուսուլ դուռը բացեց, գնըց ծիուն քով. բան տվեց: Անքան աճըղեր է, օ բա՞ն կուտե: Ձամիչը լեցոց առաջը, չկերավ, աչիցը արցունք կը թափեր:

Էլավ դուռը դրեց, ուսուլ-ուսուլ ընկավ ճանփու՝ դևերու քով. դևերը կես սահաթ հեռուն էին:

Դևերը ըսին տղին. - Խե՛ր ըլլի, Մախպութ:

Մախպութ տեսած էր ծիուն չարչարանքը, պաշլայեց լացը, չկրնըր ճուապ տար:

Դևերուն մենծ էաղբարը ըսըց. - Մախպութ, խոսի՛ր, ինչո՞ւ կուլաս, մեք քու կռնակդ իք:

Տեսածին լմանը ըսըց:

Թաժա կեյիք մ'էին զինած. դևերուն պզտի էաղբարը փոսքը դրեց տորպըկին մեջ. առին, թեզ մի էկան ծիուն վրա քաշեցին:

Մեկելտոնք էալ էկան, դուրսը պեյվան:

Տղան մտավ ներսը, փոսքը քաշեց, դևի վրու, քեչեն էալ առավ, ցգեց վրան, կապեց, էլավ դուս:

Մի սահաթ կար իրիկվա, կես սահաթ հեռըցավ արբուն սարայեն, գըցին մորին, նստան: Արևը պատեց, դևերը ըսին. - Մա՛խպութ, ասըլ քնուն խոր վաղթն է, ինչ տի ընիս նը՝ էլիր:

Էլան, ընկան ճանւիա, էկան, հասան սարայը. պզտիկ էաղբրտանքը շալակ մը ցից էր բերեր:

Տղան էրկթե ցիցը գմբուկով կը զիներ, ներդիվան կը շիներ, կը բռնըր ու կէլլըր:

Էլավ, մտավ ներս, տեսավ օ փենճերեն արբուն փերտեն դրմուն էր, մի պրկունքը գետին է, մի պրկունքը երկինքն է:

Տղան շատ վախցավ, ըսըց. - Ձիար արաբն է:

Թուրը քաշեց, հայավ օ սուրաթը տավրանմիշ չըլլիր, թրին ճոթովը մխթեց, տեսավ օ պատկերք է, էրկու արշուն դեն գնըց. պզտիկ դուռ մի էկավ էառջին. տեսավ օ արաբը պարկեր, քնացեր է, չուվթ մի շամադան գլխու վերդին է՝ չուվթ մի օտաց դին, տեսավ օ աղջիկմ՝ է, գոտուն ի վեր բաց է, գլխու թարաֆը:

Մեկ ձեառքը թուրը առավ, մեկ ձեռք էալ գոտին քակեց:

Էրեսը բարձին եան, եաստուղի վրան է դրեր, չէ՛ տեսեր, գե՞շ է, թե աղկեկ:

Գոտին քաշեց, տկուն առավ, աղջկան էրեսը օլրվավ, տեսավ էանքան աղկեկ է, օր աշխրքի էրեսը չգտնվիր:

Թուրը ձեառացը ընկավ, խելքը անցավ, ընկավ աղջկան քովը:

Ախըլլանմիշ էղավ, ըսըց՝ «Ես էաս ի՞նչ է կինիմ»: Վրու զպունը հանեց, շապիկն էալ հանեց. օսկի գդակն էլ գլխուն առավ, թոփեց, դրեց տորպըկին մեջը, տարավ դեմի փենճերին, օր ցից էր զարկեր, կախեց պարան ի վեար: Օլրվավ-էկավ, աչուկ ձեառքը դըրեց սրտին վրա: Մաննու ակը՝ պատն է զարկեր շավլան. ձեառք նետեց մաննուն, տեսավ՝ չէլավ, շատ սխու էր, էարընե քրտնուց մեջ մնըց, բերըց, թքոտեց, մաննին հանեց, դրըց իրան մատը:

Աղջիկը արթըցավ, տղի պիլեկը բռնեց:

Խապար չունի օ մաննին հաներ է:

- Մախպո՛ւթ, Աստըծու սիրուն թող ըլլի, լաթերս տուր, ես քումն իմ, դու իմն իս:

Չտվեց տղան:

Աղջիկը հայեավ մատին վրա, տեսավ օ մաննի չկա. չարան կրյրավ, ըսըց. - Էդի վերջս է. առիր, - ըսըց, - սըռըս, հիմա էսքյուկ-էթեկ եմ, հավու մի պարա ղուվաթ չունիմ:

Տղան էրդում ընել տվեց. - Ի՛նչ սըռ ունիս նը՝ պտի ըսիս, չէ՛ նը՝ կը մորթիմ:

- Իմ սըռըս, իմ ղուվաթս, իմ աշխարք ուտելս, էդ մաննին էր:

Տղան էջավ, դև աղբրտոցը խաբար տվեց, էլան-էկան, տեսան օ՝ աղջիկը եաթաղին մեջ նստեր է:

Աղջիկը ըսըց. - Դու տղամարդ չի՞ս:

- էանոք եոթն էալ իմ էաղբրտանքն է, զարար չունի:

Տղան լաթերը տվեց, աղջիկը հագավ, էլավ ղայվե մի էփեց, սրայեն տվեց, ըսըց. - Իրա՞վ, ըսոնք քու աղբրտանքդ ին:

- Մի մոր մինե չիք մեք, նո՛ր իք էղեր աղբեար:

- Ինչ օ ըրին՝ էսոք ըրին. տասվերկու տարի ինչո՞ւ իմ հողին մեջ էսոք թողիմ, օ էասանկ ընին իմ գլոխ:

էաղ տղան էադ աղջիկը առավ, իրեք ամիս աղբրտոցը հետ կուտեին, կը խմեին, կէրթային ավը:

էադ արաբը վեց ամիս էր իրա սայմանի քնարը մի թագավոր կար, Քորօղլու պես՝ ուր օր կէրթըր նե՝ կը զիներ, կը ջարդեր-տաներ, ուր օր կըյրիճ մի տեսներ:

Սայմանի մարդիկը խնդիրք տվին թե՝ ամանի էկեր իք. էասանկ արաբ մի կա. ամանի է բերեր միզի:

էան թագավորը պատրաստ տեսեր, էկեր, սարայի բոլորը բռներ է, կըսե՝ «Սարայը փլեցեք»: Տղան էալ խապար չունի, պիրետի ներսը պարկուկ ին:

Սարայը տասվերկու դաթ պիրետի մերմեր քար է:

Առավոտը լուսացավ, չորեքշաբթի օր էր. դևերը չորեքշաբթի օրը կիրակի կը պեյեին. տեսան օ արևը ցաթեր, փենճերեն ներս մտեր էր. պզտի աղբրտանքը արթըցավ. էլավ փենճերեն, հայավ օ երկնուց աստ-ղերուն հսապը կա, էադ ասկրին չկա:

Խապար տվեց աղբրտոցը, էլան ութն էալ եաօխով պաշլայեցին ասկրին զինիլը:

Սարայեն հեռըցուցին քիչ մի:

Մի ամիս ներսը մնացին. ինքեանին կըյրվավ:

Մախպութը ըսըց դևերուն. - Դուք էաս փենճերեն նետեցեք, ես էջնըմ, ձիուս հասնիմ:

էնոք նետեցին. էդ թարաֆենը հեռըցուցին:

Տղան էջավ վեար, գնըց ձիուն քով, այարը զարկեց, ախոռի մեջ հեծավ. մզրախը առավ մեկ ձեռը, թուրը քաշեց, տալմիշ էղավ մեջվանը:

Աղջիկը հագավ տղի շորերը, սև փերտեն անցոց էրեսը:

Երկու թագավորն էալ փենճերեն աղջկան կը հային, տեսան օ տղի ղլլըխ մտավ, էջավ պատերուն վեար:

Թագավորը զորապետնուն ըսըց. - Ըղու բռնեցե՛ք:

Աղջիկը ախոռին դռան վրուն բռնվավ, մաննին քովը չէր: Ինդուր օ ձեռ նետեցին, կայնավ, էրեսի վրու արաբի փերտեն նետեցին, հայտե՛, էրկու թագավոր առին, գցին:

Տղան ու դևերը կռիվ կինեին, խապար չունեին օ աղջիկը տարին:

Թագավորնուն ասկերը ետ դարձավ. էսոք կըսեին թե՝ զոռ ըրած իք, առջևնուս կը փախին, խապար չունին օ աղջիկը առած կը փախնին:

Էսոնք քշեցին էնոց վրան. էնոք օխ մի նետեցին, տղան զարկվավ:

Օխի ճոթը տղի սրտին մեջ մնըց. տղան խելթփավ, ընկավ, հասան ձինը բռնեցին, օ տղին գլոխը կյրին, ձինը տղին գոտուն բռնեց, առավ դեպի դևերու դին:

Դևերը պաշլայեցին լացը:

Դարձան տահա զոռ ըրին էնոց ասկրին:

Էնոք աղջիկը առին գըցին:

Էսոք էալ տղան առին, էկան սարայը:

Եոթ աղբեարը՝ Մախպութ, Մախպութ, կանչեցին ու կուլան:

Կը հային եարայի տեղ պեյլու չէներ:

Ինքը իրեն քաշեր էր օխը, ճոթը մնացեր էր սրտին մեջ:

Էադ դևերուն մեարը հայավ, օ երկըթե լուծը ընկեր է, խապար տվեց քորվըտոցը, թոփվան մե տեղ, մեծ քուրվտանքը ոամ նետեց, բացեց թուղթը, հայավ օ Մախպութը զարկվեր է:

Էլան իրեք քորն էալ մեկ-մեկ ձի հեծան, հասան տղին քով: Տղան չլպըղցուցին, հայան օ եարի տեղ պեյլու չըներ:

Օրթանճա քորը ըսըց. - Սրտեն էարին առնինք, էարին է գոլեր, տղան մեռած չէ:

- Միք օր էարին առնինք, էարինի առաջ չիք կրնըր կըյրեր, էասուր մեյլեմը հազիր տի ընիք, անտա տա՛ռնիք:

Պզտի քորը ըսըց. - Էասուր մեյլեմին ծաղիկը՝ Մախպութի աղբրին գլոխը հողե լեռ մի կա, տասվերկու քոք է, էան տեղ կըլլի, քսանհինգ ավուր ճամփա է:

Մենծ քորը ըսըց. - Քանի՞ ավուր կէրթաս դու, դե Մախպութի աղբրին գլխու լեառը:

- Անճախ հինգ սահաթով էրթամ, իգամ:

- Քու բանը չէ: Պզտիկ քո՛ր, քանի՞ սահաթուն, կէրթըս:

- Չորս սահաթուն անճախ:

Հերսոտավ մենծ քորը:

- Ինչո՞ւ կը հերսոտիս, դու քանի՞ սահաթուն կէրթաս, - ըսին քորվըտանքը:

- Էրկու սահաթուն:

Մենծ քուրվըտանքը շատ մենծ հեքիմ էր, թուղթը քովն էր. էրկու սահաթուն գնըց. տասնըեոթը չեշիտ ծաղիկ առավ-էկավ, դրեց ծաղկներ պզտիկ պղնձի մի մեջ. էփեց, եոթեն մե մի կայնեցոց, լցրեց եոթ ֆինճընի մեջ, չախու առավ, փորը ծակեց, սրտի շիշը հանեց, էառջի դեղը լցեց բերան ի վեար, էարինը սրբեց, ղալայեց, բերան դուրս բերըց. մերողը, կարագ, աղ խառնեց, խզած տեղը լցեց, կարեց: Եոթ ֆինճնի էրկուքը խառնեց, տկու ֆինճնին թարգը եարայի վրա քսեց:

Աչից լոսը գըցեր էր, մի ֆինճանը աչքը լեցոց, լոս էկավ:

Պալասան չիչեկուն էփեց. խառնեց էան մեկ ֆինճընին հետ, լցեց պողազն ի վեար:

Տղան էլավ, նստավ:

Պղինձ մի ջուր տաքցուցին, էան էրկու ֆինճանն էալ լցին մեջը:

Բերին տղան լոքցուցին;

էվելքու աղկեկութինը, էվելքու ղուվաթը էկավ վրան:

Եոթը ֆինճան ջուրը առին. պալասան ծաղիկը եփեցին, էադ եոթ ֆինճանին խառնեցին, որը ֆինճան մի տվին անոթի փորուն, եոթն էալ լմնցուցին:

Տղին աչիցը աշխարքը դեոր կուգա, էվել մե ղուվաթ ուներ, էնանկ տաս էղավ:

- Ա՛յ որդի, - ըսըն իրեք քորն էալ, - դու էաս ի՞նչ բան բռնեցիր:

Տղան կանչեց. - Ճեյրան, ճեյրան:

Ճեյրան չկա:

Աղբրտանքը պաշլայեցին լացը:

Իրեն այտին էղավ:

էդ յոթ ֆինճանը յոթ օրը խմեց, ինչ իմաստութին օր ուզիս, էկավ վրան, ըսըց.

- Աղբրտա՛նք, մե՛ռեր, կեցիք հոս, ես տ'էրթըմ աղջկան;

Մեծ քորվըտանքը ըսըց. - Ա՛յ որդի, կեցիր տեսնըմ, թուղթը ինչ կը սալղցնե, անտա գնա:

Թուղթը հայավ, տեսավ. «էրկու թագավոր ամենկը աղբերմ' է, ամենկը տեղմ' է զաֆթած, մենծ աղբորը մի տղա կա, քառսուն օր է՝ օ աղջիկը սուտ հիվանդ էղեր, վատա է կըյրեր քառսուն օր, քառսուն օրը լմնցեր է, հեարսնիք բռնած ին»:

- Մախպո՛ւթ, - ըսըց թուղթ հայողը:

- Ի՞նչ է, ավա:

- Ըսե տեսնըմ, քառսուն ավուր ճանփա է, քու ձինդ քանի՞ սահաթուն կը կըյրե, դու հո՛ւտկա էկու*:

- Ջոռ ընիմ էրկու սահաթուն, իլմով էրթըմ հինգ սահաթուն կը կըյրե:

Տղան ձիուն բան տվեց. եմը կըյրեց, հեծավ, ընկավ ճանփան, իրեք սահաթուն առավ**:

Տեսավ օ տարած է աղջիկը համամ, կը բերին:

Իրեք քորը հոս պատրաստ տեսան: Տղան հասավ, ձիուն մի զենկու տվեց, առավ աղջիկը թերքին, մի զենկու էալ զարկեց ձիուն, ձին թռավ, առավ-գնըց:

Թաքավորը թամաշա կիներ, ըսըց. - Բռնեցեք, վեվ առավ իրան, վեվ առավ, իրանը ըլլի:

Չկրցան բռնին:

Վեզիրնը ըսըց. - Թագավո՛ր ապրած, թելալ կանչե, ուր օ քյուփեպինեն կա, էրկնոց կէրթա, օսկի լից,տուր, էրթըն տղան իշալլա զինին, եա բռնին. մեր աշխարքը եամանի է բերած:

Վեզիրը չէր գիտեր թե աղջիկը փախուցին, գինար թե արաբն է կինե էկած:

Քյուփեպինեննին էկան, օսկիքը քյուփ կը լեցներ, ղափաղը կգիներ բերանը, ինքն էալ վրան կը հեծնար, կէլլըր էրկինքը:

Հինգ հազար հատ էլան:

Տղան էրկու սահաթվա քաղքեն հեռացեր էր. վեր մի թին կէրթա, առջին կըյրմուն է, առած է մեջտեղը:

Քյուփեպինեննին հասան վերևուն, վրան մարդ, տակը մարդ, չորս բոլորը մարդ:

Տղան խամլամիշ էղավ, մնըց:

Իրեք քորվըտանքը, էնոք էալ քյուփեպինեն ին, ջարդելեն էկան, իմտատ հասան տղին. էնոք մեկել քյուփեպինեննուն վե՛ր մի կարասին

---

* Այդ բանեն տեղեկություն տուր (ծ.բ.):

** Ճանապարհը վերջացուց (ծ.բ.):

գինեին, կարասն էալ հետը կը վառիր կըյնիր, քյուփեպինեն չմնըց, քուլ-
լին վառեցին:

Իրեք քորը աղջիկն առին, էկան տեղը:

Եոթ աղբեարը մեարերնին ճամփեցին տղին դեմ:

Եոթն էալ գըցին, հասան տղին՝ օ էարնին մեջ է, կռիվը պրծած է:

Գըցին աղբիրի մի վրա, ձինը լոքցուցին. մնացին հոտ:

Աղջիկն օր տարեր էր, էան թագավորը թուղթ ճանփեց մեկել աղբորը, գրած էր. «Դու ըդ դըուն, ես ըս դըուն, ես ըս դըուն կռիվ ինիք»:

Էնի ըն դըուն, էսի ըս դըուն տղան առին մեջտեղը, չորս թին կըյրեցին, փախելու ճար չկա, պաշլայեցին կռիվի:

Դևերուն էրկուքը զարկվան, մնացին վեց հատ տղվով. օր մարդ չմնըց ջարդեցին, տղան վերցուցին բերին տունը, իրեք օր մնացին, ինչ օ մալ կար առին, էկան մենծ քրոջը տուն, էան էալ ճանփու դրըց պապու տունը:

Դևերուն մեկը ճանփեց մյուժտեճի:

- Թագավո՛ր ապրած, տղադ էկավ:

- է, էանանկ է, պատրաստ տեսեք, - ըսըց:

Պատրաստ տեսան, աղջիկն ու տղան պսակեցին, եոթ օր, եոթ գիշեր հեարսնիք էրին: